



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

18 ապրիլի 2014 թվականի N 201-Ա

ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՅԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ և 1.23-րդ կետերի դրույթների, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ և 7-րդ կետերի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ **որոշում եմ.**

1. 2014 թվականի հունիսի 3-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Սևաբերդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով:
2. Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծել՝
 - 1) ուսումնավարժության ղեկավար խումբ՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 3) ուսումնավարժության միջնորդական խումբ՝ համաձայն N 3 հավելվածի:
3. Հաստատել հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 4 հավելվածի:
4. Ուսումնավարժությանն ընդգրկել՝
 - 1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը.
 - 2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարահանման հանձնաժողովը.
 - 3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը,
 - 4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հետևյալ վարչությունները և բաժինները.
 - ա. առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը՝ վարչության պետ Գ.Մարտիրոսյան,
 - բ. քաղաքաշինության վարչությունը՝ վարչության պետ Վ.Թադևոսյան,
 - գ. ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությունը՝ վարչության պետ Լ.Նահապետյան,
 - դ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը՝ վարչության պետ Մ.Եղիազարյան,

ե. քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժինը՝ բաժնի պետ Ա.Խաչատրյան,

5) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունը՝ վարչության պետ Ս.Հարությունյան,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքները՝

ա. Ջառ համայնքը՝ համայնքի ղեկավար Մ.Բաբախանյան,

բ. Կամարիս համայնքը՝ համայնքի ղեկավար Զ.Եգորյան,

գ. Գեղաշեն համայնքը՝ համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյան,

դ. Ջովք համայնքը՝ համայնքի ղեկավար Ն.Գևորգյան,

7) Կազմակերպություններ՝

ա. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության արևելյան տարածքային կենտրոնը՝ կենտրոնի պետ Ա.Սարգսյան,

բ. «Հայաստան էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղը՝ մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ Ա.Պողոսյան,

գ. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը՝ մասնաճյուղի տնօրեն Բ.Բաղմանյան,

դ. Սևաբերդի ջրամբարի տեղամասի պետ Ս.Մովսիսյան:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ.Գրիգորյանին՝

1) 2014 թվականի մայիսի 25-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,

2) ապահովել ուսումնավարժության օրացուցային պլանով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Սևաբերդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության պաշտպանության» պլանով նախատեսված միջոցառումները, փոխգործողությունների պլանները,

2) ուսումնասիրել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող իրավական ակտերը,

3) համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով և հանդերձանքով,

4) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

7. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի կողմից:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



Կ Ա Ջ Մ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԽՄԲԻ

Կ.Շահգալոյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ՝
ուսումնավարության ղեկավար,

Ա.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ՝
ուսումնավարության ղեկավարի տեղակալ,

Գ.Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների
նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական
վարչության պետ՝ ուսումնավարության ղեկավարման շտաբի պետ:



Կ Ա Ձ Մ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Գ.Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ,

Ա.Բենյամինյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, վարչության պետի տեղակալ, ուսումնավարժության խաղարկման խմբի ղեկավար,

Կ.Մաղաքյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, ուսումնավարժության խաղարկման խմբի անդամ,

Զ.Մխիթարյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Արվյանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար,

Տ.Ասատրյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Արվյանի հրշեջ փրկարարական ջոկատի խմբի պետ՝ ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,

Է.Գալստյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, ուսումնավարժության վերլուծման և ամփոփման խմբի ղեկավար,

Ս.Մելքոնյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, ուսումնավարժության վերլուծման և ամփոփման խմբի անդամ: